

ինչպսր խուսուսի միլէթիմիզ Միթէպէրանըն-
տան մէմուր ոչն զէյիթուէ օնիքի քիշի գաթըն
խայրեկեաշէրի օլուզումտան մուսաիէհէրի
իսիմէրի քայտ օլունմուշ տուր

Անտոն Արէլեան	Անտոն Ղազարեան
Յարութիւն Սարգսեան	Չէրէրմիս Բարսեղեան
Յակոբ Արգարեան	Յակոբ Սարգսեան
Յովսէփ Խորասանձեան	Պօղոս Ղազարեան
Անտոն Ուզուրեան	Անտոն Քալէպեան
Անդրանիկ Սահմեծի	Մաղլում Քարայեան
Ճօրճի	

Այս իշխատականը երբ սիւնակի բաժ-
նուած է. մէջտեղը կայ Հիւանդանոցին Հայերէն
անունը, եւ երկու կողման գլուխները մի եւ նոյն
Հայատաւ եւ թուրքեվար վերատառութիւնը
գնեւէ ետքը՝ շինութեան վրայ Տնօրէնը անուն-
ները եւս արձանագրուած են Մարտիան տա-
ռերով:

(Հարաւ-իսիւն)

Հ. ՌԱՅԻՆԱՆ Ե. ՍՐԱՊԵՆԻ
Երաքան Անտոնեան:



ԳՐԱՆՍԻՆԱԿԱՆՆԵՐԸ ԵՐԱՊԵՆԻ ԳՐԱՆՍԻՆԱԿԱՆՆԵՐԸ

(Հարաւ-իսիւն)

Ը. Թ Ր Ա Ր

118. 1725, մարտ 15. Թագաւորական
վերին կառավարութեան կարգադրութիւնը.
որուն մէջ կը հրամայուի Պաշտպանի Հայ ըն-
կերութեան, որ իր ցաւերը գրի անցընէ եւ եր-
կու յանձնակատար իրէէ, մերձաւոր ատեն գու-
մարուեի տէրութեան ժողովին (ընդօրինակու-
թիւն):

119. 1757, նոյեմբ. 29. Եղիսարեթու-
պոլսոյ Հայ Հասարակութեան՝ արքունի գանձա-
րանին քիւր արշաւանաց լիզմին ընդօրինակու-
թիւնը. — որուն մէջ կը խնդրուի պաշտպա-
նութիւն, որ Հայ Հասարակութիւնն՝ արքունի
երկրակալութիւնը կարենայ գնել:

120. 1758, սեպտ. 28. Մարիամ Թե-
րեզիայի առանձնաշնորհութեան պատճէնն. —
եւ ստոր դէմ յարուցուած ընդգիմադրութիւն-
ներուն՝ վաւերական ընդօրինակութիւնը:

121. 1760, մայ. 6. Աքսենտիոս Իսի-
գուցեանի եւ Աստուածատու Վիգուլեանի
տրուած լրակատար իշխանութեան թուղթը՝
Եղիսարեթուպոլսոյ քաղաքային խորհրդին եւ
Հասարակութեան կողմանէ, թէ ինչ որ ազգային

խնդրող նկատմամբ կ'ընեն, այն բաները՝ հաս-
րակութիւնը կ'ընդունի եւ կը վաւերացընէ:
Բնագիր:

122. 1760, մայ. 27. Յովհ. Գրիշայի,
արքունի գանձուն վերատառքին բնագիր հրա-
հանգները՝ Եղիսարեթուպոլսոյ պատգամաւորնե-
րուն, առանձնաշնորհութեան կոնգակն նկատ-
մամբ:

123. 1781, մայ. 31. Աբրուսկան վե-
րին կառավարութեան հրամանագիրը՝ թէ հպտ-
տակութեան երգում (homagium) ընելու հա-
մար, հրատարակուած տէրութեան ժողովքին՝
քաղքին կողմանէ ալ երկու երեսփոխան խրկուի:
Ընդօրինակութիւն:

124. 1781, յուլ. 27. Թագաւորական
վերին կառավարութեան ուրիշ մէկ հրամանա-
գիրն, որ տէրութեան ժողովքին կանչող հրաւերը՝
սխալմամբ խրկուեցաւ, ուստի եւ ետ դարձուի,
եւ պատգամաւորները՝ շնորհակալ:

125. 1781, հոկտ. 12. Ղուկաս Լազա-
րեան եւ Գրիգոր Իսիգուցեան, Եղիսարեթու-
պոլսոյ յանձնակատարներուն՝ Վիեննայէն եւ
Բրեսպուրէն, ազգային խնդրոյն նկատմամբ
խրկած տեղեկութիւններուն հայերէն լեզուա-
գրուած բնագիրները:

126. 1781, գեկտ. 28. Կարողոս Պոլյա-
նովիչ, արքունական գործակատարին, իբրեւ
Եղիսարեթուպոլսոյ փաստաբանին, քաղաքային
վարչութեան գրած տեղեկութիւններն ու հրա-
հանգները՝ ազգային խնդրոյն վրայը: Բնագիր:

127. 1782, յունուար 9. Վեհափառա-
կան որոշում, Եղիսարեթուպոլսոյ Հասարակու-
թեան կողմանէ՝ Յովսէփ Բ. կայսեր մատուցած
ցաւերուն նկատմամբ:

128. 1782, յունուար 22. Կարողոս
Պոլյանովիչ արքունական գործակատարին հրա-
հանգները (բնագիր) նախընթաց թուին մէջ
Յառաջ բերուած որոշման վրայը: — Ներ-
փակուած է նաեւ վեհափառութեանը՝ քաղ-
քին, ազգայնութեան խնդրոյն նկատմամբ նորէն
գրուած արշաւանաց լիզմին ընդօրինակութիւնը:

129. 1798, յունուար 15. Գրանսիլուա-
նիոյ տէրութեան կարգադր. — Նիկողայոս Աբաֆի
իշխանէն 1598, աւգոստ. 13ին — Պաշտպանի
գեղին արուած կամիքատուրքին նկատմամբ —
բերած ծէիւր:

130. 1783, յունիս 1. Եղիսարեթու-
պոլսոյ Հասարակութեան, առ Յովսէփ Բ. կայսր,
Սիպին քաղքին մէջ մատուցած աղերսագրին
ընդօրինակութիւնը, — որուն մէջ կը խնդրուի,

որ Մարիամ Թեբեզիայի տուած առանձնաշնորհութեան կոնդակը հաստատուի:

131. 1783, ա.գ. 5. Քաղաքին տրուած առանձնաշնորհութեան կոնդակին առաքման (expedition) նկատմամբ, քանի մը զիտողութիւններ: Ընդօրինակութիւն:

132. 1791, յուլ. 7. Եղիսարեթուպոլսոյ հասարակութեան աղաչանք՝ Դրանսիոյ առեւտրութեան կարգան, որ Եղիսարեթուպոլիս քաղաքը՝ ազատ թագաւորական քաղաքաց կարգն ընդունուի, հասարակութեան այդքենանութիւն արուի, եւ իբրեւ տոեւարական քաղաք՝ հասարակաց բոնորը կրելէն ազատութիւն ունենայ: — Ներկայական են:

ա) Լեոպոլդոս Բ. կայսեր հրամանագիրը (rescriptum), որով Եղիսարեթուպոլիս քաղաքին հասարակութեան աղաչանքը՝ Դրանսիոյ առեւտրութեան կարգաց լատ. դգածութեանը կը յանձնուի:

բ) Թագաւորական յանձնակատարին թուղթը, որուն մէջ՝ վերոյիշեալ հրամանագիրը կը յանձնարարուի տէրութեան կարգերուն:

գ) Պաւղոս Հայէր կոմսին յայտարարութիւնը՝ տէրութեան կարգերուն, որ հայերը շնորհունուին իբրեւ այդքենանին:

դ) Սեգեյլ ազգին՝ նմանօրինակ ընդդիմագրութիւնը:

ե) Իրեք ազատ թագաւորական քաղաքաց մատուցած ցաւերը:

զ) Եղիսարեթուպոլսոյ հասարակութեան տէրութեան կարգերուն մատուցած յայտարարութիւնն, որ իր հաւատարմութեանն իբրեւ ապացոյց՝ 2000 կտոր ոսկի կը նուիրէ:

է) Կերլայ Հայաքաղաքին եւ Եղիսարեթուպոլսոյ հասարակութեանց առ աղբունական յանձնակատարն գրած աղաչանքն, որուն մէջ՝ իր պաշտպանութիւնը կը խնդրեն:

133. 1791, ա.գ. 16. Դրանսիոյ առեւտրութեան կարգաց բերած որոշումը՝ որուն համեմատ. — 1791 տարւոյն 23 երրորդ յօդուածով — Եղիսարեթուպոլիս եւ Կերլայ Հայաքաղաքները՝ թագաւորական ազատ քաղաքներուն կարգը կ'անցնին եւ բնաշխարհիկ (indigenat) կ'ըլլան:

134. 1791, յուլ. 26. Դրանսիոյ առեւտրութեան կարգաց արձանագրութիւնը, որուն համեմատ. Եղիսարեթուպոլիս եւ Կերլայ Հայաքաղաքին հասարակութեանց աղաչանքը կ'ըն-

դունուի, եւ կ'որոշուի, որ բնիկ ըլլան: Վաւերական օրինակ:

135. 1784. Շարու գեղի սահմանին վրայ եղած Հէվէշ գաշտավայրին՝ շարուցիներէն առնուելուն եւ Եղիսարեթուպոլսոյ հասարակութեան յանձնուելուն նկատմամբ, իր վեհափառութեան մատուցած աղբերագիրը: Ընդօրինակութիւն:

136. Եղիսարեթուպոլսոյ հասարակութեան իր վեհափառութեանը մատուցած աղաչանքին ընդօրինակութիւնը. — որուն մէջ կը խնդրուի, որ մինչեւ հիմակ արուած առանձնաշնորհութիւններն ամրացուին, եւ քաղաքը՝ Գիւգիւլէօ գաւառին վերին իշխանութենէն անկախ ըլլուի:

137. Եղիսարեթուպոլսոյ հասարակութեան իր մեծափառութեանն ուղղած խնդրուածքը (ընդօրինակութիւն), թէ՛ իր արբունական ժառանգական (allodial) կալուածները՝ ուրիշ երկրատէրներուն երկիրներուն համեմատ տուրքէ ազատ ըլլան:

138. Վերոյիշեալ Նիւթոյն նկատմամբ, արբունեաց ատենադպրին (Cancellar) պաշտպանութիւնը կը խնդրուի: Ընդօրինակութիւն:

139. Ուրիշ խնդրուածքի մ'ընդօրինակութիւնը, որուն մէջ աղբունեաց ատենադպրին պաշտպանութիւնը կը խնդրուի:

140. Իր մեծափառութեանը գրուած խնդրուածքի մը ընդօրինակութիւն. որուն մէջ կ'աղաչուի, որ շարուցիներուն ընդդիմադրութիւնը ջնջուի. եւ Գիւգիւլէօ գետին վրայ մեացական կամուրջ մը կանգնելու հրաման տրուի:

141. Աղբերագիր առ Մարիամ Թեբեզիայ (ընդօրինակութիւն). որուն մէջ Պաշտպանի կալուածատէրութիւնը կը խնդրուի:

142. Հայ ազգին, երկու հունգարական (Հունգարիա եւ Դրանսիոյ անկախ) երկիրներուն մէջ գաղթելուն եւ հաստատուելուն ընդհանուր ստորագրութիւնը: Ասոր մէջ՝ ազգին վիճակը՝ հասարակաց ծանոթութեանութիւնները կրելու մէջ ունեցած ջնջքը. — դարձեալ, ազգին ցաւերը գրի անցունելով՝ կը խնդրուի իր վեհափառութենէն, որ ազգայիններն իբրեւ եկամտ եւ օտար շնկատուին, այլ այդքենանին համարուին. — տէրութեան ժողովքներուն մէջ իբրեւ պատգամաւոր կանչուին, եւ իրենց երգումն, արքունական յանձնակատարին առջեւ ընդունուին:

143. Խնդրուածք՝ առ վեհափառ կայսր, որ հայ ազգը՝ տէրութեան մէջ, իբրեւ այդքենանին ընդունուի:

144. Արքունական գանձուց վերատեսչին՝ թագաւորական վերին կառավարութեան ուղարկած գիտողութիւնները՝ եղիսարեթուպոլսոյ հասարակութեան խնդրուածքին նկատմամբ — որուն մէջ մինչեւ հիմակ տրուած առանձնաշնորհութեան թղթերուն հաստատութիւնը կը խնդրուի:

145. Եղիսարեթուպոլսոյ հասարակութեան պատրաստած աղաչանաց թղթին նախագիծ օրինակը (conceptus). առ Մարիամ Թերեզիա, նոր արտօնագրին մէջ գրուելէ կէտերուն նկատմամբ:

146. Ազգային խնդիրները շօշափող կէտերուն նկատմամբ՝ — Վերլոյ հայաբաղդէին հասարակութեան առ վեհափառ կայսր գրած աղաչանաց թղթին —, կառավարութիւնը կէտ առ կէտ պատասխանէ կու ապա: Ընդօրինակութիւն:

147. Ազգային մէկ հասարակութեան կողմանէ (թէ՛ որ հասարակութեան, անունը չկայ) ազգային խնդրոց նկատմամբ, գրած դիտողութիւններուն նախագիծ օրինակը:

Թ. Զ. Ր. Ա. Ր.

148. 1751, սեպտ. 29. Արքունական, դրամական եւ լեռնային (monetana et montana) վարչութիւնը՝ Միսնա դանիէլեան, Եղիսարեթուպոլսոյ ժողովրդագիտին եւ աւագերիցուն, գրած (ընագիր) տեղեկութեան մէջ կը ծանուցանէ, թէ Եղիսարեթուպոլսոյ հասարակութիւնը չկապածի իրեն շնորհուած արտօնութեանց վրայ: Մասնաւոր թէ, իրեն ի նպաստ եւ յօգուտ՝ աւելի ընդարձակ երկրակալութիւններ պիտի տրուին, եթէ որ իր ընելիքները կատարէ:

149. 1758, յունիս 8. Յովհ. Նովի եւ Յովսէփ Պոլեքորի վերահսկողութեանը տակ, արքունի գանձարանին վերաանշջին համար, Պաշպալովի երկրակալութեան՝ շունտորֆ գեղի վրայոք առնուած արձանագրութիւնը: Վաւերացուած ընդօրինակութիւն:

150. 1759, մայիս 2. Պէդրէն գերդաստանին կողմանէ, Գարբիէլ Պէդրէն կոմս. Եղիսարեթուպոլսոյ հասարակութեան եւ Թեոդորոս Դէօրեօգեանի գէմ, Պաշպալովի կալուածատէրութեան եւ Ալմագերիգ գեղին՝ գերդաստանական իրաւանց հետեւութեամբ՝ յիշեալ գերդաստանին տրուելի վճռոյն նկատմամբ եղած դատարանական ընթացքը: — Ամբաստանաւորներուն երաշխաւորութեան խնդիրը՝ դատաստանական վճռով մէկտեղ:

151. 1759, սեպտ. 6. Եղիսարեթուպոլսոյ հասարակութեան տէրութեան կարգաց ձեռօք, առանձնաշնորհութեան հրատարակութեան ատեն ըրած ընդգիմագրութիւնը ջրող գիտողութիւնը — որ իր մեծափառութեանը խրկուեցաւ, ընդգիմագրութիւնը ընելու համար:

152. 1788, սեպտ. 10. Արձանագրութիւն՝ շունտորֆի բնակչաց, անոնց գրաւորուած երկիրներու, գրաւական գումարներու, անոնց վճարման ու փրկանաւորութեան ժամանակին վրայ:

153. 1791, յունիս 18. Լէոպոլտոս Բ. կայսեր՝ տէրութեան կարգաց խրկած հրամանագիրը, որ Վերլոյ հայաբաղդէի եւ Եղիսարեթուպոլսոյ հասարակութիւնները, առաջինայ տէրութեան ժողովքին մէջ այդքէնածնութիւն ընդունին. եւ իրենց քաղաքները, օրինաց յօգուածով ըստ կանոնի թագաւորական ազատ քաղաքաց կարգն անցունին: Ընդօրինակութիւն:

154. 1791, յուլ. 25. Եղիսարեթուպոլսոյ հասարակութեան՝ Անտոն Խիգուցեանի եւ իր ընկերաց, իբրեւ տէրութեան ժողովքին խրկուած պատգամաւորներուն՝ ազգային խնդիրները յառաջ տանելու համար տուած հրահանգները: Բնագիր:

155. 1813, փետր. 13. Անտոն Անտաշի գաւառաբաժնի գառաւորին նախորդագիրը (ընագիր)՝ Թէ Գիշ Գիգիլլէօ գաւառին տրուած՝ ջքի եւ գինի ծախելու արտօնութեան համար, Եղիսարեթուպոլսոյ հասարակութիւնի իրեն վրայ գրուած մասը հատուցած է:

156. 1813, աւգ. 30. Եկամտի երեսփոխանին (subsidiális deputatus) ընագիր անգործագիրն, որ Եղիսարեթուպոլսոյ հասարակութիւնը՝ երկիրներուն վրայ գրուած մէկ ձին տուած է:

157... Եղիսարեթուպոլսոյ հասարակութեան աղերսագիրն, որ տէրութեան կարգերն՝ ի նպաստ հայ ազգային խնդրոց վրայոք բերուած օրինաց յօգուածը — ազգայնոց՝ մինչեւ հիմակ ունեցած արտօնագրութեանց անխերի պահելով — հաստատուի:

158... Եղիսարեթուպոլսոյ հասարակութեան, Պաշպալովի ընդունելութեան եւ գղեպկին վարչութեան նկատմամբ ըրած աղաչանքը պաշտպանող պատճառները:

(Ըրբան-Ելէ):

Ա. Ռ.